

հին» (իսկ նրանով էլ՝ բուն Այրարատեան ոստանին) կապող հինաւորց մայրուղին:

Ս. Թադէի վանքի տակ ընկած ճորահովտով անցնող այդ մայրուղու մասին են վկայում, օր.՝ Մովսէս Խորենացու մօտ, «Արտազեան յիշատակարանում» եւ Թադէոս առաքեալի նահատակութեան պատումի մէջ պահպանուած, ինչպէս եւ վերջինին յարող՝ Լուսաւորչի հօր՝ Անակ Պարթեւի երթուղու մասին ցուցումները: Պատմահօր բնագրերն են. «...յառաջագոյն գրեալ յայլոց՝ զգալուստ առաքելոյն Թադէի ի Հայս, եւ հաւատալ Սանատրկոյ, եւ թողոյ զհաւատսն յերկիւղէ նախարարացն Հայոց, եւ կատարումն առաքելոյն եւ որք ընդ նմա՝ **ի գաւառին Շաւարշան, որ այժմ կոչի Արտազ,** եւ պատահումն քարին եւ յիրեարս գալ եւ ընդունել զմարմին առաքելոյն, եւ առնուլ անտի աշակերտացն եւ թաղել **ի դաշտին,** եւ մարտիրոսանալ դստերն արքայի Սանդխտոյ **հուպ ի ճանապարհն.** եւ աստ ուրեմն յայտնել նշխարաց երկոցունց **եւ փոխել յառապարն**»; «Որոց /Խոսրով Մեծի առաքած գնդին/ պատահեալ Անակայ՝ ածեն զնա հրամանաւ թագաւորին **ի գաւառն,** որ անուանեալ կոչի **Արտազ,** ի տեղի **դաշտավայրս,** ուր յայտնեցան նշխարք սրբոյ եւ մեծի առաքելոյն մերոյ Թադէի... Արդ՝ ի բնակելն Անակայ **ի դաշտին Արտազու՝** պատահէ նմա **տեղի աւթարանին** մաւտ առ դիրս սրբոյ առաքելոյն, որպէս թէ ի ներքսագոյն սրկապանի խորանին, եւ անդ ասեն զլղութիւն մաւր սրբոյ եւ մեծի մերոյ Լուսաւորչին»¹: Այս դրուագն ունի նաեւ Ագաթանգեղոսի երկի «Վարք» տարբերակի ասորական խմբագրութիւնը («Երբ նա [Անակը] հասաւ մի **քաղաքի** /այլուր՝ Շաւարշան – Ա. Յ./, նրա **բանակը** դադար առաւ այնտեղ: Իսկ ինքը բարձրացաւ այն բլուրը, որտեղ պսակի էր արժանացել Ադդէ առաքեալը, եւ այդ գիշեր ննջեց իր կնոջ հետ: Վերջինս յղացաւ նրանից այս Գրիգորին, որը լուսաւորեց ողջ Հայաստանը»)²: Մի՞թէ պարզ չէ, որ Անակի **օթարանը** եւ իր «բանակի» կայանատեղին մեծ մայրուղու վրայ պիտի լինէին:

Է դարում գրուած «Արտազեան յիշատակարանը» սրանց յաւելում է. «եկն [Թադէոս] ի **գաւառս Շաւարշան քաղաք** Հայաստանի, յամս Սանատրուկ թագաւորի Արշակունեաց եւ լուսաւորեաց անդ»³: Իսկ «Վկայաբանութիւն Թադէոսի առաքելոյն...» եւ «Գիւտ նշխարաց Թադէոսի առաքելոյն [եւ Սանդուխտ կոյսի]» վերնագրեր կրող ուշագրաւ վարքագրական երկի (Ե դ. վերջ կամ Զ դ. սկիզբ)⁴ հաղորդումները հետեւեալն են. «Եւ ինքն

¹ Խորենացի 1913, 157 (գլ. Բ.դ); 212 (գլ. Բ.հդ):

² Տե՛ս Տեր-Պետրոսյան 1988, 45:

³ Տե՛ս [Մանկունի Վ. վրդ.] 1868, 102:

⁴ Այդ բնագրի բանասիրական քննութիւնը տե՛ս Ակիւնեան 1969, 399-426; Van Esbroek 1972, 243-283; Վարդանյան 2001, 61-70: